Վաղարշակ կալաւ տեղի Հայկայ, Բակրատ տեղին Վաղարշակայ, Ռուբէնն տեղի Բակրատայ մինչև 'ի պատճառէ անկարգութեան բնականապէս մնաց այսօր տեղի ամենեցուն դատարկ. անկարգութիւնս այս 'ի սկսանիլն մինչև կատարածն աւերման տեսաց ժամանակս աւելի կամ պակաս իբրև երկու հազար ամս, այլ լուարուք ինձ բարեկամք եթէ Տէր ոչ կամեսցի և քաւ մի լինիցի պատուոյն չորից տարերաց եթէ գուցէ մոցէ յանդգնութիւն 'ի մէջ այս չորս տարերաց, որպէս եմուտ ընդ բնութիւնս մեր եթէ յառաջանայցէ մտանել արեգական 'ի տեղի հողոյն և ծովն 'ի տեղի հողոյն և այլն. իսկոյն դղրդի տիեզերս, աւերի աշխարհ, կորնչի ամենայն բնութիւն ամենայն կենդանեաց, միջոցաւ միմիայն միոյ բոպէիւ, ուրեմն կալ և մնալն 'ի վերայ հաստատութիւն երկնային և երկրային արարածոց ըստ իւրաքանչիւրոյ սահմանին կախեալ կան, եթէ ճառագայթն հրոյ 'ի անճառելի ջերմութեամբն իւրով և անհասանելի մտաց մերոց և ծովն ովկիանոս, որում ժամանակաւ խաղաղ 'ի յերեսս երկրի և յեղաբարոյ մայրն մեր հող որում ծնաւ բնական կենդանիս 'ի զանազան ազգէ և քաջն անկացանալի հողմն, որում բուրէ և բուսուցանէ ամենայն բնութեանց 'ի սկզբանէ արարածոց իւրեանց մինչև ցայսօր կացին և մնացին հնազանդ պատուիրանի Տեառն արարչին իւրեանց և դոքին